ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ

Արցախը ագում է Հայաստանի Հանրապետության ազգային հերոս, Ծայրագույն Պատրիարք, Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի վախճանը: Շարունակելով Սուրբ Գրիգորի, Ավարայր ոգեկոչող Հովսեփ Ա Վայոցձորցու, Մեծն Սահակ Պարթևի, ոսկեբերան Ներսես Շնորհալու, քաջակորով Մկրտիչ Խրիմյանի, Գևորգ Զ Չորեքչյանի և հայոց հիշողության մեջ արբացված մյուս Հովվապետերի նվիրական ավանդները, Նորին Սուրբ Օծությունն իր շուրջ չորս տասնամյա հովվության շրջանում դաստիարակել է Առաքելական Եկեղեցու բազում սպասավորներ, պահպանել և բազմապատկել հայոց հոգևոր արժեքները, ամրագրել կապերը քույր Եկեղեցիների, Հայրենիքի և Սփյուռքի հայ հավատացյալների հետ, քաջալերել Հայոց Եկեղեցու միասնության ամրապնդումը: Արցախահայությունը երախտագիտությամբ է հիշում իր հավատքը իրեն վերադարձնելու իր օրինական պահանջները պաշտպանելուն ուղղված հանգուցյալ Հայրապետի անմնացորդ ջանքերը և լիահույս է, որ կամքն Աստծո ստանձնելով հայ ժողովրդի ազատության ծանր խաչը, հետայսու ևս Սուրբ Էջմիածնի միաբանության կողմից փրկչական ապավինում կգտնի իր աղոթող ազգի մաքառող հատվածի համար:

«ԼՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ